Տիրելն շատ է, բայց ստուգիւ տեսակ մի տի-
բապետել և պայազատել էր կէս դար, Պա-
տրի և Շահնշահի վզբրկութիւնն. վասն զի
թոյլտուութեամբ կամ թուլութեամբ Խա-
լիֆայից, իրենք հոգային թէ քաղաքական
թէ զինուորական գործերը, և թէ տնտե-
սականը, այսինքն տէրութեան գանձն կամ
եկամուտն. որ Պատրի վերահոգութեամբ,
և Աշ–Խահհալ մեծ զատրի մի գործադրու-
թեամբ՝ տարեկան երեք միլիոն դենարէն
աւելի էր. իսկ Շահնշահ, կ՝ըսէ Աբուսահլ,
գլխահարկը աւելցուց մինչեւ մէկ դենար
և $^3/_4$։ Ասոնց գործոց՝ թէ ոչ շատ տարի՝
այլ շատ մասամբ հետեւող և յաջորդ եղան
Շնորհալւոյ գոված հօրեղբարքն, մանա-
ւանդ երիցագոյնն Վահրամ՝ թագ պետու-
թեան մականուանեալն, հաւատարիմ ամի-
բապետին, հաւատարմագոյն Ամենապետին,
հայրենի և պահլաւունի ցեղին կրօնապա-
հութեամբ, և առաւելեալ իսկ քան զիշխա-
նակից ազգակիցսն, ինչպէս քիչ մի յետոյ
պիտի տեսնեմք։ — Վահրամ՝ վզուրկ եղաւ
Հաֆրզ խալիֆայի ատեն, որ թուլութեամբ
չէր կարող կառավարել. և նախ իր որդին
ապստամբեցաւ և սկսաւ զուրիշներն այլ
գրգռել. զօրականք աղաչեցին և խալիֆայն
հաւանեցաւ՝ որ Վահրամ յանձն առնու
վէզիրութիւնը, փոխանակ ապստամբ որդ-